Նախագիծ
Երկրորդ ընթերցում

Պ-356-19.08.2022,14.11.2022-ԳԿ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Տեսալսողական մեդիայի մասին» 2020 թվականի հուլիսի 16-ի ՀՕ-395-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 43-րդ հոդվածը լրացնել նոր 4-րդ և 5-րդ մասերով՝ հետեւյալ խմբագրությամբ.

«4. Սույն հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված անվանումը չի կարող համընկնել, նույնական կամ շփոթելու աստիճան նման լինել այն անձի ապրանքային նշանին կամ ֆիրմային անվանմանը, դրա գովազդներում օգտագործված կամ օգտագործվող գրաֆիկական կամ ձայնային նշաններին, որը վերջին տասը տարում զբաղվել է շահումով խաղի (այդ թվում՝ ինտերնետ շահումով խաղի) կամ վիճակախաղի (տոտալիազատորի) կազմակերպման գործունեությամբ:

5. Եթե հեղինակազորման հայտը չի համապատասխանում սույն հոդվածով սահմանված պահանջներին, ապա կարգավորող պետական մարմինը վերադարձնում է հայտը այն ստանալուց հետո՝ տասնօրյա ժամկետում՝ այն սույն հոդվածի պահանջներին համապատասխանեցնելու համար: Հեղինակազորման հայտը վերադարձվելուց հետո մեկամսյա ժամկետում այն սույն հոդվածի պահանջներին չհամապատասխանեցվելու և կրկին չներկայացվելու դեպքում կարգավորող պետական մարմինը մերժում է հայտը:»:

Հոդված 2. Օրենքի 58-րդ հոդվածի 1-ին մասում լրացնել նոր 9-րդ կետ.

«9) Հեռարձակողի տեսալսողական ծրագրի անվանումը չի համապատասխանում սույն օրենքի 43-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներին:»:

Հոդված 3. **Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարկմանը հաջորդող տասներորդ օրը:

2. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը հեղինակազորված Հեռարձակողի տեսալսողական ծրագրի անվանումը պետք է համապատասխանեցվի սույն օրենքով սահմանված պահանջներին սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո վեց ամսվա ընթացքում: Սույն մասի պահանջները չկատարվելու դեպքում կարգավորող պետական մարմինը հեղինակազորված Հեռարձակողի նկատմամբ կիրառում է Օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված պատասխանատվության միջոցը:

3. Եթե մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը կարգավորող պետական մարմին է ներկայացվել հեղինակազորման հայտ, որը սույն օրենքի ուժի մեջ մտնելու պահին դեռևս չի ընդունվել, և որը չի համապատասխանում սույն օրենքով սահմանված պահանջներին, ապա կարգավորող պետական մարմինը վերադարձնում է հայտը այն ստանալուց հետո՝ տասնօրյա ժամկետում՝ այն սույն օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

4. Սույն հոդվածի 3-րդ մասի համաձայն հեղինակազորման հայտը վերադարձվելուց հետո մեկամսյա ժամկետում այն սույն օրենքի պահանջներին չհամապատասխանեցվելու և կրկին չներկայացվելու դեպքում, կարգավորող պետական մարմինը մերժում է հայտը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

««Տեսալսողական մեդիայի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» եւ «Գովազդի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի ընդունման

1. Ընթացիկ իրավիճակը, իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

Ներկայումս «Գովազդի մասին» օրենքով սահմանված են գործունեության տեսակներ, որոնց գովազդը արգելված կամ սահմանափակված է: Այդպիսի գործունեության տեսակներից են նախխաղային և վիճակախաղի գործունեությունը: Այսպես, շահումով խաղերի եւ վիճակախաղերի համար օրենսդիրը սահմանել է գովազդային էական սահմանափակումներ՝ նպատակ ունենալով մի կողմից պաշտպանել սպառողների շահերն ու իրավունքները, մյուս կողմից հասարակության շրջանում հնարավորինս չխթանել խաղամոլությունը: Այլ կերպ, նշված գործունեությունը հանրության շահերից ելնելով տարբեր բնագավառներում ենթարկվում է որոշակի սահմանափակումների, ինչը ենթադրում է հանրային բարեկեցության և օգտակարության տեսանկյունից դրա ոչ լիարժեք պիտանիության և պակաս օգտակարության մասին:

Նշվածից նաև ենթադրվում է նույն մոտեցման պահպանման անհրաժեշտությունը տեսալսողական մեդիայի ոլորտում գործունեություն իրականացնող անձանց դեպքում՝ հաշվի առնելով, որ տեսալսողական մեդիայի ոլորտը կարող է ինչպես ուղղակիորեն, այնպես էլ անուղղակիորեն օգտագործվել խնդրո առարկա գործունեության տարածման, գովազդման կամ այլ կերպ իրազեկման համար:

Այս համատեքստում հարկ է նկատել, որ թեև գործող օրենսդրությամբ նախատեսված են կարգավորումներ, որոնք ուղղված են տեսալսողական մեդիա հաղորդումների ժամանակ խնդրո առարկա գործունեության գովազդման սահմանափակումներին, սակայն գործող օրենսդրությունը, ըստ էության, չի բացառում նման գործոնեության հետ ասոցացվող անվանումներով տեսալսողական ծրագրերի անվանումների օգտագործումը: Նշվածի հետևանքով, փաստացի հնարավորություն է ստեղծվում, որ գործեն հեռարձակողներ, որոնք կունենան տեսալսողական ծրագրեր, որոնց անվանումները մարդկանց մոտ կարող են կասոցացվեն խաղային և վիճակախաղի գործունեության հետ՝ ըստ էության դառնալով անուղղակի գովազդ:

Հետեւաբար «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքում լրացումներ կատարելու անհրաժեշտությունը բխում է այն նպատակադրումից, որ պաշտպանվեն հանրային շահերը խաղային և վիճակախաղերի գործունեության պակաս օգտակարության համատեքստում: Նշվածով պայմանավորված, անհրաժեշտություն են նաև այնպիսի սահմանափակումները, որոնք կերաշխավորեն նման գործունեության գովազդման կամ տարածան անուղղակի հնարավորությունները:

Ընդ որում, այս համատեքստումանհրաժեշտ է նաեւ ապահովել ազատ մրցակցային եւ հավասար դաշտի ապահովումը շուկայում գործունեություն իականացնող բոլորի համար, ինչը նախագծի ընդունմամբ նույնպես ապահովվում է՝ նախատեսելով առաջարկվող պահանջների կիրառելիությունը նաև մինչև օրենքի ուժի մեջ մտնելը հեղինակազորված հեռարձակողների համար: Այս համատեքստում առաջնահերթ նկատենք, որ Օրենքի 1-ին հոդվածի տրամաբանությունից բխում է, որ տեսալսողական մեդիայի գործունեությունը պետության կողմից կարգավորվող գործունեություն է, քանի որ պետությունն այստեղ իրականացնում է հեղինակազորման և լիցենզավորման և, հետևաբար, նաև վերահսկողության գործառույթներ: Այլ կերպ, խնդրո առարկա ոլորտում պետությունն իրականացնում է որոշակի քաղաքականություն, որը, իր հերթին, բխում է Սահմանադրության 86-րդ հոդվածից, ըստ որի՝ տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներից է նաև սպառողների շահերի պաշտպանությունը, ապրանքների, ծառայությունների և աշխատանքների որակի նկատմամբ վերահսկողությունը:

Այս կապակցությամբ հարկ է նկատել, որ պետության կողմից կարգավորվող որոշակի ոլորտում պետական քաղաքականության իրականացումը և դրա համապատասխան փոփոխությունը ինքնին չեն կարող համարվել ոչ իրավաչափ՝ համաչափության սկզբունքի պահպանման պահանջով: Այլ կերպ, նախագծով նպատակ է հետապնդվում կատարվող փոփոխությամբ հետապնդել հանրորեն օգտակար շահ, ինչպես նաև ապահովել ընտրված միջոցի համաչափությունը նշված հանրորեն օգտակար շահի համատեքստում: Արդյունքում, ոչ թե փաստացի կսահմանափակվի իրավուքը, այլ կփոփոխվեն դրա իրացման պայմանները:

Հատկանշական է, որ նման կարգավորումների նախատեսումը նոր մոտեցում չէ Հայաստանի օրենսդրության համար, օրինակ.

- «Լիցենզավորման մասին» օրենքի 48-րդ հոդվածի 4-րդ մասը նախատեսում է, որ լիցենզիայի պայմանների ու պահանջների այնպիսի փոփոխությունը, որը սահմանափակում է լիցենզավորված անձի իրավունքները կամ նրա համար նախատեսում է նոր պարտականություններ, ուժի մեջ է մտնում համապատասխան փոփոխությունը հրապարակելուց ոչ շուտ, քան 6 ամիս հետո.

- «Ապրանքային նշանների մասին» օրենքի անցումային դրույթներով ևս նախատեսվել են միչև օրենքն ուժի մեջ մտնելը գրանցված ապրանքային նշանների՝ այդ օրենքի պահանջներին համապատասխանեցնելու պահանջ.

- «Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» օրենքի 40-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ մինչև նույն օրենքի ուժի մեջ մտնելն ստեղծված ջուր սպառողների (ջրօգտագործողների) կոոպերատիվները և ընկերությունները (ՋՍԿ, ՋՍԸ) պարտավոր են մինչև 2003 թվականի դեկտեմբերի 31-ը վերակազմակերպվել սույն օրենքով սահմանված ջրօգտագործողների ընկերությունների: Նշված ժամկետում չվերակազմակերպված կոոպերատիվները և ընկերությունները լուծարվում են օրենքով սահմանված կարգով.

- «Գրավատների և գրավատնային գործունեության մասին» օրենքի անցումային դրույթներով նախատեսվում է, որ նախկինում տրված լիցենզիաները շարունակում են գործել նոր օրենքի պահանջների պահպանմամբ.

- Նույն «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» օրենքի կամ «Վիճակախաղերի մասին» օրենքի անցումային դրույթներով սահմանված են նույնաբնույթ կարգավորումներ դրանց լիցենզիաների շարունակման կապակցությամբ.

- և այլն:

Իր հերթին, համանման իրավիճակի անդրադարձել է Սահմանադրական դատարանը իր ՍԴՈ-1437 որոշմամբ: Մասնավորապես, Սահմանադրական դատարանը նշել է, որ որպես հետադարձ ուժի գնահատման չափանիշներ պետք է դիտարկել իրավական որոշակիությունն ու լեգիտիմ ակնկալիքների սկզբունքները, որոնց լույսի ներքո հետադարձությունը կարող է թույլատրելի լինել, եթե դա է պահանջում օրենսդրության փոփոխությամբ հետապնդվող նպատակը և եթե շահագրգիռ կողմերի լեգիտիմ ակնկալիքները պատշաճ կերպով պաշտպանված են: Ընդ որում, Սահմանադրական դատարանի նման եզրահանգումները հիմնվում են Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ ՄԻԵԴ) դատական պրակտիկայի վրա: Արդյունքում, Սահմանադրական դատարանը գտել է, որ ելնելով իրավունքի գերակայության սկզբունքից՝ անհրաժեշտ է իրավական ակտի փոփոխության կամ լրացման արդյունքում նոր իրավակարգավորումները ժամանակի մեջ և անձանց նկատմամբ գործողության մեջ դնելու այնպիսի կանոններ պահպանել, որոնց գործադրմամբ երաշխավորվեն նրանց իրավունքների իրացման իրավաչափ պայմաններ: Սահմանադրական դատարանը եզրահանգել է, որ նման փոփոխությունների գործադրումը պետք է զուգորդվի այնպիսի իրավապայմանների սահմանմամբ, որոնք, մասնավորապես, կերաշխավորեն պարտականությունների կատարման կանխատեսելիություն և դրան համապատասխան՝ սուբյեկտիվ վարքագծի դրսևորման համարժեք հնարավորություն՝ բացառելով հետադարձ ուժով իրավասուբյեկտների իրավական վիճակի որևէ վատթարացում:

Նման մոտեցումը, ինչպես նշվեց, խորթ չէ նաև ՄԻԵԴ դատական պրակտիկային: Այսպես, Բելանե Նագին ընդդեմ Հունգարիայի[1] գործով ՄԻԵԴ-ը հետադարձ ուժի իրավաչափությունը դիտարկել է դրանով փոփոխվող իրավական ակտով հետապնդվող նպատակի և դրանով նախատեսվող միջամտության համաչափության համատեքստում՝ ինքնին հետադարձության փաստը խնդրահարույց չհամարելով: Մեկ այլ գործով[2] հետադարձության հարցը քննարկելիս, ՄԻԵԴ-ը նշել է, որ օրենսդիրը կատարվող փոփոխությամբ նպատակ է հետապնդել շտկելով թերությունը վերահաստատել իրավահարաբերության նկատմամբ իր սկզբնական նպատակը, և որ հարաբերության սուբյեկտները չէին կարող բացառել օրենսդրի կողմից իրենց հարաբերությունները կարգավորելու հավանականությունը: Օգիս ինստիտուտի գործով[3] նույնանման մեկնաբանության համար որպես հետապնդվող հանրային շահ ՄԻԵԴ-ը դիտարկել է սոցիալական վճարների հավասարեցումը: Նույն մոտեցումը կիրառվել է նաև մի շարք այլ գործերով[4]:

Հատկանշական է, որ նման մոտեցումը կիրառվում է նաև Եվրոպական Միության Արդարադատության դատարանի (այսուհետ՝ ԵԱԴ) կողմից: Այսպես, C-246/87 գործով, երբ ԵՄ նոր հակադեմպինգային (հակագնագցման) կարգավորմանը տրվել էր հետադարձ ուժ կապված մինչև ուժի մեջ մտնելը կնքված պայմանագրերի հետ, ԵԱԴ-ն խնդրահարույց չի գտել քանի որ այն չի կարող հակասել լեգիտիմ ակնալիքների պաշտպանության սկզբունքին: Քանի որ հակագնագցման գործընթացը դեռևս շարունակվում էր, շրջահայաց առևտրականը գիտեր կամ պետք է իմանար, որ հակագնագցման տուրք սահմանելը հնարավոր է, և այդ պատճառով կարող էր հաշվի առնել այդ հնարավորությունը՝ իր մատակարարների հետ պայմանագրեր կնքելիս[5]: C-258/80 գործով ԵԱԴ-ն նշել է, որ չնայած ընդհանուր առմամբ իրավական որոշակիության սկզբունքը թույլ չի տալիս, որ ԵՄ միջոցները ուժի մեջ մտնեն մինչև դրանց հրապարակումը

---

[1] CASE OF BÉLÁNÉ NAGY v. HUNGARY, 53080/13, paras. 121-123

[2] HÔPITAL LOCAL SAINT-PIERRE D'OLÉRON AND OTHERS v. FRANCE, 18096/12, para. 72

[3] OGIS-INSTITUT STANISLAS, OGEC ST. PIE X ET BLANCHE DE CASTILLE and others v. France 42219/98 and 54563/00, para. 69

[4] Տե՛ս օրինակ՝ FORRER-NIEDENTHAL v. Germany, 47316/99, para. 64, THE NATIONAL & PROVINCIAL BUILDING SOCIETY, THE LEEDS PERMANENT BUILDING SOCIETY AND THE YORKSHIRE BUILDING SOCIETY v. THE UNITED KINGDOM, 117/1996/736/933-935, paras. 110-112

[5] Case C-246/87, *Continentale Produkten-Gesellschaft Erhardt-Renken GmbH & Co. v Hauptzollamt Munchen-West*, E.C.R. 1151 [1989]

որոշակի պահից, բացառիկ դեպքերում կարող է այլ կերպ լինել, եթե դա պահանջում է այն նպատակը, որին պետք է հասնել, և երբ շահագրգիռ կողմերի լեգիտիմ ակնկալիքները պատշաճ կերպով պահպանվում են: Բացի այդ, նույնիսկ եթե դիտարկվող դրույթը համարվում է հետադարձ ուժ ունեցող, ապա դրանից չի բխում, որ այն ինքնըստինքյան անօրինական է[6]: 245/81 գործով ԵԱԴ-ն ընդգծել է, որ ԵՄ ինստիտուտներն օգտվում են իրենց քաղաքականության իրականացման համար անհրաժեշտ միջոցների ընտրության հայեցողությունից, առևտրականները չեն կարող պնդել, որ ունեն լեգիտիմ ակնկալիքներ, որ առկա իրավիճակը, որը կարող է փոփոխվել այդ ինստիտուտների կողմից իրենց հայեցողական լիազորությունների սահմաններում ընդունված որոշումներով, կպահպանվի[7]:

Վերոգրյալով պայմանավորված առաջնահերթ կարևոր է նշել, որ կատարվող փոփոխությունները հետապնդում են հանրորեն օգտակար շահ: Ընդ որում, հարկ է նկատել, որ հեռարձակողը սպառողի առջև հանդես գալիս տեսալսողական ծրագրի անվանումով, և այդ անվան կիառումը կարող է սահմանափակված գործունեության անուղղակի գովազդման և դրա հետ ասոցացման տարրեր պարունակել: Միևնույն ժամանակ, իրավական որոշակության համատեքստում, նախատեսվող նորմի կանխատեսելիությունն ապահովելու համար Նախագծի անցումային դրույթներում առաջարկվում է նախատեսել պայման առ այն, որ օրենքի ուժի մեջ մտնելուց հետո վեցամսյա ժամկետում անձինք իրենց ծրագրի անվանումը կկարողանան համապատասխանեցնել նոր իրավակարգավորումներին: Նշված ժամանակահատվածում նոր պահանջներին տեսալսողական ծրագրի անվանումը չհամապատասխանեցնելու դեպքում միայն կառաջանա պատասխանատվություն կիրառելու հարցը՝ հեղինակազորման գործողության կասեցման, իսկ կասեցումից հետո Օրենքով սահմանված ժամանակահատվածում խախտումը չվերացնելու դեպքում՝ հեղինակազորման գործողության դադարեցման ձևով:

Բացի այդ Օրենքն ուժի մեջ է մտել 2020 թվականի օգոստոսի 7-ին, որով սահմանվել են նոր կարգավորումներ տեսալսողական մեդիա դաշտի համար, ինչպես նաեւ սահմանվել են նոր հասկացություններ, որոնք արտացոլված չեն «Գովազդի մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) տեսալսողական մեդիային վերաբերող իրավադրույթներում: Ավելին, ՀՀ Սահմանադրության համաձայն տեսալսողական մեդիա ոլորտը կարգավորող լիազոր մարմինը՝ Հեռուստատեսության եւ ռադիոյի հանձնաժողովն է, որը եւս Օրենքում ներկայացված է հին անվամբ, այն է՝ Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողով:

Վերը նշվածի համատեքստում՝ պարզ է դառնում, որ Օրենքը՝ տեսալսողական մեդիա ոլորտի կարգավորման մասով, այլեւս ոչ արդիական նորմատիվ իրավական ակտ է, որը պարունակում է այնպիսի դրույթներ, որոնք չեն համապատասխանում առկա համայնապատկերի բնութագրիչներին: Օրենքի այն հոդվածները, որոնք կարգավորում են տեսալսողական մեդիային վերաբերող հարաբերությունները հնացած են եւ համապատասխանում են «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» օրենքին, որն ուժը կորցրել է 2020 թվականին:

2. Առաջարկվող կարգավորման բնույթը

Առաջարկվում է լրացում կատարել «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 43-րդ հոդվածում եւ փոփոխություններ կատարել «Գովազդի մասին» օրենքի այն բոլոր հոդվածներում, որոնք կարգավորում են տեսալսողական մեդիա ոլորտը, մասնավորապես՝ Օրենքի 9-րդ, 14-րդ, 15-րդ եւ 24-րդ հոդվածները:

3. Ակնկալվող արդյունքը

Նշված փոփոխությամբ կբացառվի օրենսդրորեն առկա այն անուղղակի հնարավորությունը, երբ տեսալսողական մեդիայի գործունեություն իրականացնողները կունենան տեսալսողական ծրագրերի այնպիսի անվանումներ, որոնք կասոցացվեն վերջին հինգ տարում խաղի կամ վիճակախաղի գործունեությամբ զբաղվող անձանց հետ, ինչպես նաեւ կիստակեցվեն այն իրավահարաբերությունները, որոնք կարգավորում են գովազդի հեռարձակումը տեսալսողական մեդիայով, կհամապատասխանեցվեն ինչպես գործող տեսալսողական մեդիա օրենսդրությանը, այնպես արդի միաջազգային կարգավորումներին:

Օրենքի փոփոխությամբ կվերացվեն տեսալսողական մեդիա օրենսդրության հետ հակասությունները եւ կիստակեցվեն Օրենքում օգտագործվող հասկացությունները:

4. Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ.

Նախագծով առաջարկվող լրացումը եւ փոփոխությունները բխում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականի ծրագրից:

---

[6] Case C-258/80, *Metallurgica Rumi v Commission*, E.C.R. 251 [1981] [11]–[12].

[7] Case 245/81 *Edeka Zentrale AG* v. *Germany* [1982] ECR 2745.

~~ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ~~

Երկրորդ ընթերցում
(Պ-356-19.08.2022,14.11.2022-ԳԿ-011/1)

ՏԵՂԵԿԱՆՔ

ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը
«ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱՅԻ ՄԱՍԻՆ»

Հոդված 1. «Տեսալսողական մեդիայի մասին» 2020 թվականի հուլիսի 16-ի ՀՕ-395-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 43-րդ հոդվածը լրացնել նոր 4-րդ և 5-րդ մասերով՝ հետեւյալ խմբագրությամբ.

«4. Սույն հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված անվանումը չի կարող համընկնել, նույնական կամ շփոթելու աստիճան նման լինել այն անձի ապրանքային նշանին կամ ֆիրմային անվանմանը, դրա գովազդներում օգտագործված կամ օգտագործվող գրաֆիկական կամ ձայնային նշաններին, որը վերջին ~~հինգ~~տասը-տարում զբաղվել է շահումով խաղի (այդ թվում՝ ինտերնետ շահումով խաղի) կամ վիճակախաղի (տոտալիազատորի) կազմակերպման գործունեությամբ:

5. Եթե հեղինակազորման հայտը չի համապատասխանում սույն հոդվածով սահմանված պահանջներին, ապա կարգավորող պետական մարմինը վերադարձնում է հայտը այն ստանալուց հետո՝ տասնօրյա ժամկետում՝ այն սույն հոդվածի պահանջներին համապատասխանեցնելու համար: Հեղինակազորման հայտը վերադարձվելուց հետո մեկամսյա ժամկետում այն սույն հոդվածի պահանջներին չհամապատասխանեցվելու և կրկին չներկայացվելու դեպքում կարգավորող պետական մարմինը մերժում է հայտը:»:

Հոդված 2. Օրենքի 58-րդ հոդվածի 1-ին մասում լրացնել նոր 9-րդ կետ.

«9) Հեռարձակողի տեսալսողական ծրագրի անվանումը չի համապատասխանում սույն օրենքի 43-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներին:»:

Հոդված 3. **Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարկմանը հաջորդող տասներորդ օրը:

2. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը հեղինակազորված Հեռարձակողի տեսալսողական ծրագրի անվանումը պետք է համապատասխանեցվի սույն օրենքով սահմանված պահանջներին սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո վեց ամսվա ընթացքում: Սույն մասի պահանջները չկատարվելու դեպքում կարգավորող պետական մարմինը հեղինակազորված Հեռարձակողի նկատմամբ կիրառում է Օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված պատասխանատվության միջոցը:

3. Եթե մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը կարգավորող պետական մարմին է ներկայացվել հեղինակազորման հայտ, որը սույն օրենքի ուժի մեջ մտնելու պահին դեռևս չի ընդունվել, և որը չի համապատասխանում սույն օրենքով սահմանված պահանջներին, ապա կարգավորող պետական մարմինը վերադարձնում է հայտը այն ստանալուց հետո՝ տասնօրյա ժամկետում՝ այն սույն օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

4. Սույն հոդվածի 3-րդ մասի համաձայն հեղինակազորման հայտը վերադարձվելուց հետո մեկամսյա ժամկետում այն սույն օրենքի պահանջներին չհամապատասխանեցվելու և կրկին չներկայացվելու դեպքում, կարգավորող պետական մարմինը մերժում է հայտը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Պ-356-19.08.2022,14.11.2022-ԳԿ-011/1), «ԳՈՎԱԶԴԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Պ-356[1]-19.08.2022,14.11.2022-ԳԿ-011/1) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

N	Առաջարկության հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերվում է առաջարկությունը	Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ կառավարություն	«Գովազդի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին (Պ-356[1]-19.08.2022,14.11.2022-ԳԿ-011/1) օրենքի նախագծի 1-ին հոդված	Առաջարկվում է «Գովազդի մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող 9-րդ հոդվածի 4-րդ մասում հստակեցնել «(գ/ֆ, վ/ֆ, հ/ս)» ձևակերպումները:	Ընդունվել է	Ընդունվել է
2.	ԱԺ պատգամավոր Գևորգ Պապոյան	« Տեսալսողական մեդիայի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» (Պ-356-19.08.2022,14.11.2022-ԳԿ-011/1) օրենքի նախագծի 1-րդ հոդված	Առաջարկվում է « Տեսալսողական մեդիայի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող 43-րդ հոդվածի 4-րդ մասում «հինգ» բառը փոխարինել «տասը» բառով:	Ընդունվել է	Ընդունվել է